



Մելիք ՍԵԼԻՔՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

5-րդ կուրսի (հեռակա ուսուցում) ուսանող

ԻՆՔՆԻՐԱՎՉՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻՆ ԱՈՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐ

Ինչպես քրեական իրավունքի տեսությունում, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում հաճախ բարդություններ են առաջանում ինքնիրավչության որակման, ինքնիրավչության հետ որոշակի ընդհանրություններ ունեցող տարբեր հանցագործություններն իրարից սահմանազատելու և այլ իրավական հարցերով, ինչն այս հանցակազմի որոշ հարցերի խորը վերլուծության անհրաժեշտություն է առաջացնում:

ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետև նաև ՔՕ) 322-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ինքնիրավչությունը՝ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ իր իրական կամ ենթադրյալ իրավունքներն ինքնական (ինքնագուլխ) իրականացնելը, որն էական վնաս է պատճառել անձանց իրավունքներին կամ օրինական շահերին կամ խոշոր վնաս՝ պետական կամ հասարակական շահերին՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով»:

Սույն հոդվածի իմաստով իրական իրավունք ասելով պետք է հասկանալ բավարար իրավական հիմք ունեցող փաստե-

րի համակցությամբ անձին վերապահված իրավունքը, իսկ ենթադրյալ իրավունք՝ անձի սուբյեկտիվ ենթադրության վրա հիմնված, առանց իրավական հիմքի ձևավորված իրավունքը, որն իրականում օբյեկտիվորեն վերջինիս շնորհված չէ:

Առաջին հերթին կցանկանանք անդրադառնալ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածում տեղ գտած «իր իրական կամ ենթադրյալ իրավունքներն ինքնական (ինքնագուլխ) իրականացնելը» սահմանմանը: Նշված ձևակերպումից, կարող է հարց առաջանալ, թե հանցավորի կողմից հանրորեն վտանգավոր արարքի կատարման հիմքը պետք է լինի միայն վերջինի՞ս իրական կամ ենթադրյալ իրավունքների իրականացումը, թե հնարավոր են նաև այլ անձանց իրական կամ ենթադրյալ իրավունքների ինքնական (ինքնագուլխ) իրականացման դեպքեր:

Կարծում ենք, հարցի ճիշտ պատասխանը երկրորդ տարբերակն է, սակայն այդ համոզմունքը ձևավորվում է իրավանորմի տարածական մեկնաբանության արդյունքում, իսկ քրեաիրավական իմաստով տարածական մեկնաբանությունը պետք է դիտվի ծայրահեղ միջոց՝ օրենքի բուն էությունը և նպատակները չխաթարելու համար, մինչդեռ քրեաիրավական նորմերին բնութագրական է տառացի մեկնաբանությունը:

Չարգացնելով նախորդ պարբերությունում արծարծված իրավանորմի մեկնաբանման գաղափարը, ցանկանում ենք հղում կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածին, այն է՝ «Նորմատիվ իրավական

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 9 - 10 (231-232)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն

ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հողվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»։ Այսինքն, ըստ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի տառացի մեկնաբանության, ինքնիրավչությունը կարող է ուղեկցվել միայն հանցավորի իրական կամ ենթադրյալ իրավունքների ինքնակամ (ինքնագլուխ) իրականացմամբ, մինչդեռ այն դեպքերում, երբ հանցագործությունը ուղեկցվի՝ այլ անձի իրական կամ ենթադրյալ իրավունքների ինքնակամ (ինքնագլուխ) իրականացմամբ, ապա այդ դեպքում կատարված հանրորեն վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքին քրեաիրավական պատշաճ գնահատական տալու և որակելու համար կստեղծվեն խոչընդոտներ։

Այնուամենայնիվ, նշված իրավական անհատականությանը որոշակիորեն լույս է սփռում ՀՀ քրեական օրենսգրքի 2017 թվականի նախագծի¹ (այսուհետև նաև Նախագիծ) 423-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ իրական կամ ենթադրյալ իրավունքներն (ինքնագլուխ) իրականացնելը կարող է դրսևորվել ոչ միայն հանրորեն վտանգավոր արարք գործողի, այլև այլ անձի իրական կամ ենթադրյալ իրավունքների ինքնակամ (ինքնագլուխ) իրականացմամբ։

Մյուս հիմնախնդիրը վերաբերվում է ինքնիրավչության հարաբերակցությանը ՀՀ ՔՕ-ով նախատեսված այլ ինքնիրավչության հետ որոշակի աղերսներ ունեցող

հանցագործությունների հետ։

Մասնավորապես՝ որակման տեսանկյունից բարդություններ են առաջանում ինքնիրավչության և անձի, առողջության, արժանապատվության սեփականության և օրենքով պահպանվող այլ իրավահարաբերությունների պահպանման դեմ ուղղված հանցագործությունների հետ, ինչի կապակցությամբ անհրաժեշտ է նախևառաջ դիտարկել դրանց հանցակազմերի առանձնահատկությունները։

Սրա հետ կապված անհրաժեշտ է բացահայտել ինքնիրավչության հանցակազմի էությունը։ Ինքնիրավչության հանցակազմի էությունը բացահայտելու նպատակով որպես ուղեցույց կարող է հանդիսանալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Վ. Պետրոսյանի վերաբերյալ կայացրած 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԱՎԴ-1/0063/01/09 նախադեպային որոշմամբ արտահայտած հետևյալ դիրքորոշումը²։

«(...) Նշված հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է միայն ակտիվ վարքագծով՝ գործողությամբ։ Ընդ որում՝ անհրաժեշտ է, որ այդ գործողության իրավաչափությունը վիճարկվի անձի (կազմակերպության) կողմից։ Տվյալ դեպքում որպես վիճարկում հարկ է հասկանալ շահագրգիռ անձի կողմից իրավապահ մարմիններին համապատասխան հայտարարություն (դիմում, բողոք) ներկայացնելը՝ ինքնիրավ գործողությունների արդյունքում իրավունքների և օրինական շահերի խախտման վերաբերյալ։ Ինքնիրավչության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է գործողության կատարման եղանակը. հանցավորը գործում է ինքնակամ, ինքնագլուխ կերպով, իրավունքի իրականացման՝ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ։ Ընդ որում՝ արարքը որպես ինքնիրավչություն որակելու համար որևէ նշանակություն չունի, թե՛ հանցավորի գործողություններն ուղղված են եղել իրական, թե՛ ենթադրյալ իրավունքի իրականացմանը (...)»։



(...) Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ. հանցավորը կարծում է , որ ինքն ունի որոշակի իրավունք, գիտակցում է, որ այդ իրավունքը վիճարկվում է այլ անձի կամ կազմակերպության կողմից, և ինքն իրականացնում է այդ իրավունքը օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ: Հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի վերաբերմունքը կարող է դրսևորվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ: Ինքնիրավչության սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը: (...)

Շարունակելով ինքնիրավչության հանցակազմի հետազոտումը՝ անորադառնաք ինքնիրավչության՝ որպես հանրորեն վտանգավոր, հակաիրավական արարքի օբյեկտիվ կողմին:

Մասնավորապես, տեսական գրականությունում կան տեսակետեր առ այն, որ ինքնիրավչությունը դրսևորվում է միայն գործողությամբ, սակայն իրավակիրառ պրակտիկայում չեն բացառվում նաև ինքնարավչության դրսևորումներն անգործությամբ, ինչի կապակցությամբ Ա. Վ. Կլադկովը³ արտահայտել է հետևյալ տեսակետը. «Ինքնիրավչությունը կարող է դրսևորվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ, օրինակ՝ երբ անձը պահում և չի հանձնում, այդ թվում նաև պետական մարմիններին, վիճարկվող գույքը, ինչի արդյունքում սեփականատերը նյութական վնաս է կրում»:

Այսպիսի գնահատականը, կարծում ենք, լիովին արդարացված է, քանի որ չկատարելով օրինական պահանջը հանցավորն ակամայից իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ, ինքնուրույն (ինքնագլուխ) իրականացնում է ենթադրյալ կամ իրական իրավունք:

Ինքնիրավչության հանցակազմը նյութական է, այն համարվում է ավարտված, երբ հանրորեն վտանգավոր, հակաիրավական արարքի արդյունքում հասցվել

է էական վնաս: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է դիտարկել սույն հոդվածի իմաստով հասցված վնասն էական համարելու չափանիշները, ինչի շուրջ կարծիքներն իրար կարող են հակասել և տարանկնարանությունների առաջացման առիթ հանդիսանալ: Այդպիսիք շրջանցելու տեսանկյունից արժանահավատ է Լ. Վ. Դարոշի կողմից առաջ քաշած այն տեսակետը, համաձայն որի՝ ինքնիրավչությամբ հասցված վնասն էական համարելը պայմանավորված է յուրաքանչյուր գործի առանձնահատկություններից ելնելով, այսինքն՝ փաստական տվյալների ամբողջությամբ, որպիսիք ի թիվս այլ հիմքերի (inter alia) կարող են լինել անձի առողջության, սեփականության և սահմանադրությամբ ամրագրված այլ արժեքների նկատմամբ ուղեկցվող ոտնձգությունը:

ՌԴ Գերագույն դատարանի Պլենումն իր 2008 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ⁵ արտահայտած դիրքորոշմամբ նշել է, որ առերևույթ կատարված հանցագործությունն ինքնիրավչություն որակելու համար անհրաժեշտ է, որ հասցված վնասը համարվի բացառապես էական, որի ապացուցման ընթացակարգը ենթակա է իրականացման ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի կարգով՝ տվյալ քրեական գործի քննության շրջանակներում ապացուցման ենթակա այլ հանգամանքների հետ միասին:

Իմի բերելով էական վնասի վերաբերյալ հիմնական մոտեցումները՝ անհրաժեշտ է նշել, որ վնասի էական լինելու չափանիշը թեև գնահատողական բնույթի ունի, այնուամենայնիվ այն պետք է լինի փաստարկված գործի հանգամանքների ամբողջությամբ և կասկած չհարուցի անկախ և անաչառ դիտորդի մոտ, որպիսի իմպերատիվ պահանջը սահմանված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի պահանջով:

Հանցակազմի օբյեկտիվ կողմի քննարկման կապակցությամբ կարևոր է անդրադառնալ նաև Նախագծի 423-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հետևյալ դրույթին.

«(...) կատարվել է բռնություն գործադրելու, գույք ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու, անձի կամ նրա մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ եղանակներով(...)»:

Այսինքն, ըստ նախագծի վերոշարադրված դրույթի, հանցագործության առանձին էպիզոդիկ դրսևորումներն ամբողջացվել են մեկ ընդհանուր հասկացության մեջ, այն է՝ «հարկադրանք»:

Խոսելով ինքնիրավչության և դրա հետ նմանություններ ունեցող այլ հանցագործությունների մասին, առաջին հերթին հարկ ենք համարում քննարկել ինքնիրավչության և շորթման միջև եղած մի շարք ընդհանրություններ և տարբերություններ, որոնք առաջ են գալիս քրեական գործի քննության շրջանակում:

Ինքնիրավչության և շորթման հանցակազմերի ընդհանրություններն ակնհայտ են հատկապես, երբ հետազոտում ենք դրանց օբյեկտիվ կողմերը: Դրանց տարբերակման առումով հաճախ են առաջանում խոչընդոտներ, որոնք ի թիվս այլ հանգամանքների՝ արտահայտվում են նաև հանցավորի կողմից դրսևորված հարկադրանքով: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ ինքնիրավչությամբ դրսևորված հարկադրանքը պետք է բացառապես ուղեկցվի իրական կամ ենթադրյալ իրավունքների խախտման հետևանքով, օրենքով սահմանված կարգի խախտմամբ իրավունքների (ինքնագլուխ) իրականացմամբ, մինչդեռ շորթման պարագայում ուղեկցված հարկադրանքը պայմանավորված է նյութական շահ ստանալու հետ:

Հաճախ են դեպքերը, երբ հանցանք կատարող սուբյեկտի կողմից իրականացված ոտնձգության պատճառ է դառնում վերջինիս նկատմամբ հետագայում տուժող ճանաչված անձի հակաիրավական կամ հակաբարոյական վարքագիծը, սակայն ոչ բոլոր դեպքերում է խախտված իրավունքների համար հասցվող «պատասխանը» որակվում որպես ինքնիրավչություն:

Վերոշարադրյալն առարկայական և հասկանալի դարձնելու նպատակով ներկայացնենք օրինակ: Ընդունենք, թե անձը մարմնական վնասվածք է հասցրել մեկ այլ անձի, իսկ դրան հաջորդում է ծանր մարմնական վնաս ստացած անձի կողմից ծանր մարմնական վնաս հասցնողի վրա ավագակային հարձակում կատարելը: Նշված դեպքում այն չի կարող դիտվել ինքնիրավչության դրսևորում քանի որ հստակ է, որ ոտնձգողի կողմից կատարվող գործողությունը վրեժից բխող և շահադիտական դրդումներով կատարված հանրորեն վտանգավոր, հակաիրավական, քրեորեն պատժելի արարք է, այսինքն՝ այլ հանցագործություն, պայմանավորված նաև վիճարկվող իրավունքի և հասցված վնասի ակնհայտ անհամաչափ և որակապես լիովին տարբեր երևույթների հետ:

Իրավիճակն այլ կլինի, երբ օրինակ երկու անձանց միջև կնքված լինի փոխառության պայմանագիր, և պարտապան կողմը չարամտորեն խուսափի իր վրա դրված՝ գումարը վերադարձնելու պարտավորությունից, այսինքն՝ պարտատերը կրի նյութական վնաս և կրած վնասը վերականգնելու նպատակով՝ որոշի պարտապանին ենթարկել ավագակային հարձակման, ինչի արդյունքում ուղեկցված բռնությունը պարտապանի կյանքի և առողջության համար վտանգավոր է: Մինչ նշված օրինակի վերաբերյալ եզրահանգման գալը՝ անհրաժեշտ է մանրամասն քննության առարկա դարձնել մի շարք իրավական հարցեր:

Նախևառաջ, կատարված հանցա-



գործություններին պատշաճ իրավական գնահատական տալու և դրանք ճշգրիտ որակելու համատեքստում անհրաժեշտ է դիտարկել որպես «բռնություն», ինչի կապակցությամբ կողմնորոշիչ նշանակություն ունի ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արևիկ և Ծովինար Մահակյանների գործով⁶ կայացված որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ «(...) բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը գրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք: (...)»:

Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված վերոգրյալ դիրքորոշման լույսի ներքո պարզ է դառնում, որ թե՛ գործող օրենսգրքի, թե՛ Նախագծի 423-րդ հոդվածում կա օրենքի բաց, այնքանով, որքանով օրենսդիրը չի հստակեցնում, թե ինչ բնույթի բռնության մասին է խոսքը, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածում հստակ նշվում է, որ ավագակությամբ ուղեկցված բռնության բնույթը պետք է լինի կյանքի կամ առողջության համար վտանգավոր:

Այս տեսանկյունից Մոլդովիայի Հանրապետության օրենսդիրը դրսևորել է արդարացված մոտեցում՝ Մոլդովիայի քրեական օրենսգրքի 352-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում ամրագրելով, թե բռնության կոնկրետ ինչ ձևերով կարող է դրսևորվել ինքնիրավչությունը:⁷

Կարծում ենք, որ իրավակիրառ պրակտիկայում կատարված առերևույթ ինքնիրավչության և դրա հետ զուգահեռ կատարված այլ հանցագործությունների դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել հանցագործությունների համակցության կամ կլանման կանոններով: Ինքնիրավչությամբ ուղեկցված բռնությունը են-

թադրում է, որ այն չի կարող դրսևորվել առողջությանը ծանր վնաս պատճառելու, ծանրացուցիչ հանգամանքներում խոշտանգման, ծանրացուցիչ հանգամանքներում միջին ծանրության վնաս պատճառելու ձևերով⁸, ուստի վերևում բերված փոխառության պայմանագրի խախտման հիմքով պարտատիրոջ կողմից կատարված հանցավոր արարքների օրինակում, եզրահանգում ենք, որ նմանօրինակ դեպքերում պետք է առաջնորդվել հանցագործությունների համակցության կանոններով, քանի որ պարտատիրոջ կողմից կատարված հանրորեն վտանգավոր արարքների եղանակները, ինչպես նաև դրանց նպատակները, այսինքն՝ համապատասխանաբար օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերն էլ պետք է տարբեր են և չեն կարող կլանել մեկը մյուսին:

Շարունակելով ինքնիրավչության հիմնախնդիրների հետազոտումը՝ անհրաժեշտ է նշել, որ ինքնիրավչության հանցակազմի օբյեկտն համապարփակ է: Հանցավոր արարքի կատարմամբ կարող են վնասվել անձի առողջության, սեփականության, արժանապատվության և այլ հիմնարար իրավունքները, սակայն հանցագործության օբյեկտի գլխավոր տարբերակիչ առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ դրա օբյեկտ են համարվում անձանց՝ օրենքով սահմանված կարգով իրավունքների և ազատությունների իրականացման սահմանված կարգը սպահովող հարաբերությունները, ինչպես նաև կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը:

Անդրադառնալով ինքնիրավչության սուբյեկտին, անհրաժեշտ է նշել, որ ինքնիրավչության սուբյեկտ է 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը, ինչը կրկին տարբերակիչ հանգամանք է կյանքի և առողջության, սեփականության և այլ իրավահարաբերությունների դեմ ուղղված մի շարք հանցագործությունների դեպքում՝ տարիքային շեմի մասով:

Գործող քրեական օրենսգրքի 322-րդ

հողվածում և Նախագծի 423-րդ հողվածում չի անհատականացվում հանցագործության հատուկ սուբյեկտը: Գործնականում բազմաթիվ են սուբյեկտը, երբ ինքնիրավչության հետ հարաբերվող գործողությունները կատարվում են պետական ծառայողների կողմից և այդ արարքները որակելու տեսանկյունից պետք է դիտարկել տվյալ հանցագործության օբյեկտը:

Մասնավորապես «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հողվածի 2-րդ մասով սահմանվում է. «(...) Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը (...):»:

Այսինքն՝ պետական ծառայությունը և հետևաբար պետական ծառայողների լիազորությունների պատշաճ իրականացումը միտված են պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների պատշաճ իրականացմանը, ուստի դրանց խաթարման ցանկացած դրսևորում, որն առերևույթ կպարունակի հանցագործության հատկանիշներ, ուղղված է պետական ծառայության դեմ, իսկ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններն ամրագրված են ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ գլխում:

Այսինքն՝ պետական ծառայողների կողմից կատարված՝ ինքնիրավչությանը նմանվող արարքները պետք է որակվեն որպես պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություն:

Այսպիսով, հիմք ընդունելով վերագրյալ իրավակարգավորումները, ներպետական և միջպետական իրավանորմերը, գիտական դոկտրինները, դատական պրակտիկայում ձևավորված պրակտիկան՝ գալիս ենք եզրահանգման, որ ինքնիրավչության հիմնահարցերի բազմակողմանի ուսումնասիրությունն ինքնին հիմնարար նշանակություն ունի ինչպես տեսական, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում հանցագործությունները տարբերակելու, դրանք ճշգրիտ որակելու և վերջապես իրավական որոշակիության համար, ինչի կարևորության և հիմնարար նշանակության վերաբերյալ ինչպես արդեն նշել ենք, անդրադարձ է կատարվել նաև Սարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշմամբ⁹, առ այն, որ «(...) որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլնի, կոչված է նաև կանխելու, բացառելու «կամայականության վտանգը» (Hilda hafsteinsdóttir v. Iceland» application no. 40905/98, 08.06.2004, p.56) » (...):

¹ ՀՀ քրեական օրենսգրքի 2017 թվականի նախագիծ:
² ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Վ. Պետրոսյանի վերաբերյալ կայացրած 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԱՎԴ-1/0063/01/09 նախադեպային որոշման 13-14-րդ կետեր:
³ Кладков А.В., Характеристика и уголовно-правовая оценка физического и психического насилия при соприкосновении представителю власти или общественности // Учен. зап. Пермск.гос.ун-та.1970.№247.
⁴ Л.В. Дорош, Ответственность за самоуправство по Уголовном кодексу Украины, уголовным кодексам государств-участников стран СНГ и стран Балтии.

⁵ Определение Судебной коллегии по уголовным делам Верховного Суда РФ от 27 февраля 2008 г. N49-ДП08-25К.
⁶ Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱԲԴ /0176/01/11 որոշման 18-րդ կետը:
⁷ Уголовный кодекс Республики Молдова, Статья 352.
⁸ ՀՀ քրեական իրավունք, Հատուկ մաս, Դասագիրք ԲՈՒՀ-երի համար, ԵՊՀ Իրատարակչություն, 2012, էջ 871:
⁹ Hilda hafsteinsdóttir v. Iceland» application no. 40905/98, 08.06.2004, p.56

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 9 - 10 (231-232)

ԴԱՏԱԿԱՆ Իշխանություն



RESUME - РЕЗЮМЕ

SOME THEORETICAL AND PRACTICAL PROBLEMS RELATED TO THE BODY OF THE CRIME (CORPUS DELICTI) OF THE ARBITRARINESS

Melik Melikyan

5th year student at YSU Faculty of Law (part-time education)

The article discusses the issues of separating the body of the crime of arbitrariness from other similar bodies of the crimes (corpus delicti), the essence of the concept of "essential damage", the possibility of doing arbitrariness with idleness, the possibility of voluntarily implementing legal or alleged rights of other person.

Keywords: *arbitrariness, extortion, robbery, offence, body of the crime (corpus delicti), considerable damage, violence, law.*

НЕКОТОРЫЕ ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ, КАСАЮЩИЕСЯ СОСТАВА ПРЕСТУПЛЕНИЯ САМОУПРАВСТВА

Мелик Меликян

*Студент 5-ого курса (заочное отделение)
юридического факультета ЕГУ*

В статье рассматриваются вопросы отличия понятия «самоуправство» как состава преступления от других подобных составов преступлений, а также изучается сущность понятия «существенный ущерб», возможность самоуправства недееспособного человека, возможность добровольного осуществления реальных или предполагаемых прав другого человека.

Ключевые слова: *самоуправство, вымогательство, разбой, преступление, состав преступления, существенный ущерб, насилие, право.*

Բանալի բառեր - *ինքնիրավչություն, շորթուհ, ավազակություն, հանցագործություն, հանցա-
կազմ, էական վնաս, բռնություն, իրավունք:*

ՄԵՊՏԵՍԵՍԵՐԵՐ - ՀՈՄՍԵՆՍԵՐԵՐ 2018 9 - 10 (231-232)

ԴԱՏԱԿԱՆ
ԻՉԻՎԱՆՈՒԹՅՈՒՆ